



ՏՆՕՐԷՆ-ԻՄՐԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ք. ՏԱՐԻ ԹԻԻ 47

ՀԱՐԱՐ

21 ՅՈՒԼԻՍ 1907

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ



Ջ Ե Ն Ի Թ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոստիլի դիսարանին. 1903

ԱՐՏԱՐՈՅ ՄՐՑՄԱՆ. — Անդամ Ժիւռիի. Միլան. 1906

ԵՒՆ. ԵՒՆ. ԵՒՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՀԱՄԱՐ.

Գ. ՍԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շրթա-
ներու եւ գոհարեղեններու

ԹԻԻ 16 = ՊԱՆԶԷ-ԳԱՐՈՒ = ԹԻԻ 16

Օռոզտի-Պաք հաստատութեան դիմացը.

Ի Բերա, Կ'գանուի գոհարավաճառ Տ. Տ. ԷՔՄԷՔՃԵԱՆ ԵՂԲԱՐՑ քով,

Թիւ 400 Մեծ-փողոց.


Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

(آ. آصا دوربان) شرکت صنیعہ مطبعہ — باب عالی جادہ سندہ نومبر ۱۹۰۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի Շառսեխի քիւ 52

Հատը 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
վրանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅԾ. ՓԱԼԱՅԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կառարեւոտործութեան,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

ձեռքի ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց ձեռք:

ՇԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵՐԻՏԱՐ | Զարչը Պօյու, թիւ 120 . |

Կանարեալ երաշխաւորութիւն

Մասնահիշեր գաւառներու բոլոր ֆաղսֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և
343 կրկին, Տիւզդուլուի տունը:

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵՄԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Փաւառաց համար	»	»	27 »
Արսասահման	»	»	6 Ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԵ՛

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հասկսի Ասասուրեան տպարան թիւ 52.

Փաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան և
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտարութիով և կամ բոսթայի փոխով 20 հատը
20 ղրուչի հաշուով:



ՏՆՕՐԷՆ-ԽՍՐԱԿԻՐ -- ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 47

ՇԱՐԱԹ

21 ՅՈՒՆԻՍ 1907



ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՆԵԱՆ

«ԻՆԹԵՐՎԻՈՒ» ՄԵ ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Իմանալով թէ, մեր ծանօթ բանաստեղծներէն Նազարեանն է մինակ որ Եղիաի մօտ կ'երթայ և անոր թանկագին մտերմութիւնը կը վայելէ, և նկատի առնելով թէ ո՞րքան շահեկան կրնայ ըլլալ, մեր գրասէր ընթերցողներուն ճշգրիտ տեղեկութիւններ մը հրամայեցի՝ Եղիաի արդի մտաւորական և ֆիզիքական վիճակին վրայ, դիմեցինք իրեն՝ որ բարեացակամութիւնը ունեցաւ մեզի պատասխանելու։ Եւ ահա այս առիթով է որ կը հրատարակենք նաեւ իր լուսանկարը, իբր միակ ուխտաւորը՝ մեր Նիրվանայապաշտ հիւանդ իմաստասէրին։

Կը հարցնենք նախ, թէ ի՞նչ վիճակի մէջ է Եղիան։

— Երեւակայեցէ՛ք, կը պատասխանէ, ինչը ամիսներէ ի վեր, ցաւագին հիւանդութենէ մը հիւժած ու նիհարցած մարմին մը, կորսուած՝ անկողինի սաւաններուն խորը, որոնք, իրենց ծոցէն դուրս կը ցայտեցնեն, մինակ գլուխ մը՝ լայն ճակատով, խոռոչացած աչքերով, որոնք, կիսախուփ քեզի կը նային և որոնց մէջ կը նշմարես՝ երկարատեւ դէպի կեանք սպասումի մը յոգնութիւնը՝ յուսահատիչ սպասում մը արգարեւ։ Իրեն այնպէս կը թուի, որ իր շուրջը, ամէն բան կատղեցողիչ անշարժութեան մը մասնուած է, ամէն անգամ զինքը տեսնալու իր առաջին խօսքերը յուսահատի մը խօսքերը կ'ըլլան։ Դէպ ի կեանք այս յարատեւ սպասումէն զգացած ճայնճրոյթը կը պատմէ ինծի, այն գերազանցօրէն կուռ ու բանաստեղծական ոճովը՝ որ իրենն է դեռ, ու շեշտը որ կը դնէ իր ճայնին մէջ, ու խորութիւնը և միանգամայն բարձրութիւնը որ կայ իր խօսքերուն մէջ՝ վրաս միշտ Առաքեալի մը տրպաւորութիւնը թողած են։

— Զի՞շտ են վերջերս տեղական թերթերու մէջ երեւցած տեղեկութիւնները՝ իր իմացական ու մտաւորական վիճակին վրայ։

— Գրուածները կարգացի իր իմացականութեան մասին գրուած տեղեկութիւնները դժբաղդաբար սխալ էին։ Որովհետեւ

Եղիան, նոյն իսկ իր է՛ն ծանրագին օրերուն՝ ուր մահուան դէմ կը պայքարէր, պահեց իմացականութեան ամենափայլուն վիճակ մը։ Իսկ այսօր նոյն վիճակին մէջն է՝ հակառակ իր ֆիզիքական տկար կացութեանը։ Ինք յաճախ կը խօսի ինծի՝ ջլադրգիւ շեշտով մը, գրական ու իմաստասիրական խորունկ հարցերու վրայ, որոնք, մօքի կատարեալ յստակութիւն կը պահանջեն։

— Ֆիզիքականը ի՞նչպէս է։

— Շնորհիւ Ազնուասիրտ Տիկին Էլէն Նիսնի, որ անձնուէր քրոջ մը պէս, ամէն նիւթական և բարոյական զոհողութիւններու յանձնառու՝ կը խնամէ Եղիան և որ այսօր ապաքինումի մէջ է։

— Այս միջոցին իր ամէնէն շատ կարգացած գիրքը ո՞րն է։

— Ժամանակէ մը ի վեր, բօխկնեղ արգիլած են իրեն ո՛ր և է ընթերցանութիւն, բայց անկէջ առաջ, իր սիրած գիրքը՝ Աստուածաշունչն էր։

— Ներեցէ՛ք, սենեակին նկարագրութիւնը կ'ընէ՞ք։

— Կոկիկ սենեակ մը, կիսալոյս՝ բանաստեղծական սենեակ մը ուր՝ գուրգուրացող կնոջ մը ձեռքին հետքերը կ'երևան։ Մաքուր մահճակալ մը՝ ուր պառկած է Եղիան, մահճակալին ճակատը՝ ընդարձակ մատենադարան մը, որուն ապակիներուն ետեւէն լիթուէ՝ իր փառակազմ հատորներուն մէջէն, իր մեծանուն Որդեգրեալին կը նայի՝ որ իր մօտը կը տառապի։ Կո՛ղ, խուժանին աղմուկներէն հեռու, այդ միստիք սենեակը, երանաւետ անդորրութեամբ մը լեցուած ցանկալի միւսալայր մը պիտի ըլլար՝ Եղիաի մարդոց դէմ քէն ըրած ու իր յուսախաբութիւններէն դառնացած հոգիին համար, եթէ մերթ ընդ մերթ, քովընտի տըխրահուչ փողոցներէն, գոեհիկ երգեր բարձրանալով՝ չխանդարէին վսեմ խորհողին գաղափարները։

Այսքանը բաւ համարելով հրաժեշտ կառնենք իրմէ և կը մեկնինք գոհունակ սրտով՝ իմանալով որ Նազարեան, արդէն սկսած է պատրաստել՝ Եղիայի վերջին օրերու պատմութիւնը անձնական անհամար անէքթոտներով համեմուած և Եղիաի անտիպ քերթուածներուն հաւաքածոյովը ճոխացած։

ԽՄԲ.

ԵՐԻԿ ԿՆԻԿ

Ի ստորեւ կը հրատարակենք մաս մը, եղիա Տէմիրճիպաշեանի ժողովրդական լեզուով գրած վիպակէն, որ հրատարակուած է 1889ի Արեւելք-ներու քանի մը թիւերուն մէջ:

Պեքեարութիւնն իրաւ իրաւ անտանելի բան է մար ու քուր չունեցողին համար, կարգընէն ալ զոթէն Աստուծոյ սահմանած մէկ բանն է. ամա կէսէ մարդս կը մոմտայ: «Կարգուիմ, չի կարգընիմ» կը հարցունես նորէն ինքզինքիդ: Կարգուած բարեկամնեքուդ կը հարցունես. « ընտո՞ր, կարգուիլդ, աղէկ բան է, կնկնէդ խօշնիդ էս »:

Ո՛րը կ'ըսէ. « մէյ մը կարգուողը, մէյ մ'ալ չի կարգուողը փուշման »:

Ո՛րը կ'ըսէ. « կարգուիլ աղէկ ամա, սա ալաֆուանկան չըլլար. ֆիստանին չաբխային սօնը չի գար, ախպա՛ր, ոսկիները քուրջի կտորներուն տուր, սըրմա, կըլափտան, թըրթըր, փուլ, բան մը չի գայ որ փարա ընէ աս Էլփոփայէն եկած կնկան հագուստներուն վրայ. էնթարի չալվար մը կը շինէին, ծախէիր նէ, կէնէ փարա էր: Անկէց ետքը, կնկանդ ֆիստան չինէ, որ ուրիշին աղուոր երեւնայ, սուառէ, պալօ, բիք-նիք, տահա՛ գօնսէն, կէնէ գօնսէնէն բան մը կը հասկընաս կոր, քիչ մը սըլսըլմիշ կ'ըլլաս կոր նէ, քէյֆ մըն ալ կ'իմանաս կոր կէնէ: Զօլուխ շօճուխ էրէսի վրայ կը մնանան կոր, ախպա՛ր, ինկուրնին միտուրնին հիմակուան ընտանիքներուն՝ սիւսի ու՛ գետի՛նն ասնի՛ ղօռքեզանութեան է. քիպարճա՛ սիրահարութիւն կ'ըսեն կոր: Ամա՛ն, բերանս բանալ մի տար, է՛ն աղէկը տեղը մնայ »:

Ո՛րն ալ կ'ըսէ. « կարգուեցար, բարեկա՛մ, աղէկ. կնիկդ տանտըկին, սիրտցաւ, աստուածավախ, հաւատարիմ, անքիծ անաբատ. ամա ինչ ըսես նէ՛ հակառակը պիտի ըսէ. Ի՛նչ ընես նէ՛ հակառակը պիտի ընէ: Պէ կնի՛կս, ճանրս ճիւղ՛րըս, ատ խըղմէթը քեզի ծանր է եկած, թող աղախինը ընէ չէ՛, ինքը պիտի ընէ. անկէց ետքը պիտի հիւընտնայ: Հէքիմ կը բերես. բէհրիդ չընեք, հէքիմին դեղն օգուտ չընեք: Հէքիմը փոխենք.

փոխենք. աղէկցաւ. դուն հիւընտցար. ալ խուրպան կ'ըլլայ որ սաաթ մը առաջ աղէկնաս. աղէկցա՛ր. նէվսանիյէթը կը սկսի. թէրսութիւն, թիթիզութիւն: Հանրմը՛ս, ճանր՛ս ճիւղ՛րս, սա սիմիթը մ'ուտեր, միտէիդ կը փակչի կը մնայ, գլուխըտ կը դառնայ, սիրտդ նեղութիւն կ'իմանաս. մախպուան ու բաթլիճան տօլմասի երկուքը մէկտեղ մ'ընեք. միտէիդ կը նստի կոր, գլխու պտոյտ կ'ուենաս կ'որ, ես ալ սուֆրայէն անօթի կ'ելլամ կոր, խալեար հացն ալ չըլլայ նէ, Ի՛նչ պիտի ընեմ չիյտեմ: Անոր ալ ամէն հեղու բանը կ'ըսես. խալեարը կուօղ կերեւայ ոչքիդ. ուտելու բանը չես ուտեր, սիրուելու բան չես սիրեր: Իտարէ կ'ըսես. միս չես թողուր որ առնեմ. միսին տասը խաթը հէքիմին էղաճիին կուտանք կոր. կերածդ չի մարսելուդ արունդ կը տկարանայ կոր. անկէց կ'ելլաս, մեք միսնով ասանկ եք կ'ըսես: Աստուծու սիրուն, զաւկներուդ սիրուն, խօսք մտիկ ըրէ. եկուր օս մուզու ուտելիքներէն վաղ ասնինք, անոնք մարդուս սնունդ չեն իտար, միտէդ կը լեցունես, փորըդ չի կիշտանար, Աստուծու սիրուն... Դուն Աստուծոյ վախցող կնիկ մըն ես և գիտես կոր որ Աստուծոյ հրամանին դէմ կը վարուիս կոր. կնիկ մը գլխաւորին խօսքը ոտքին տակ առնելու է ասխրտար. Աստուծոյ հրամանն ասանկ է: Ես քեզի քառ քառ ըսած չունիմ. սիրտս փորս կը հատնի որ աղէկ ապրիս, վրայ գաս, չի հիւընտնաս: Դուն կէնէ գիտցածէդ չաշմիշ չես ըլլար: Ալ Ի՛նչ ըսել, Ի՛նչ ընելս չեմ գիտնար, ախպա՛ր, կնիկէս գոհ եմ. ամա իշտէ ասանկ է »:

Ո՛րն ալ՝ հարցունես քի կարգուիլդ աղէկ բա՛ն է նէ, ճողապ չի տար, անդին կը նայի, կը խնտար կոր նէ՛ սուրաթը խանթար խանթար կը կախէ, նառկիլի կը խմէր կոր նէ՛ մարփուճը ծառքէն կիշնայ, խօսքը խօրաթան կը հատնի, պըյըլսը մօրուքը ծառքը կ'առնէ կը նստի:

Մարդ ալ կայ որ սուտ տեղը կարգուելը աղէկ է՝ կ'ըսէ կոր, կնկընէն բէք խօշնիդ ըլլալ կը ցուցունէ կոր. ծառաներէն միշտեւ անգամ կ'իմանաս կոր որ էրիկ կնիկ չուն ու կատու էն իրարու հետ. օր մը տըվալէդի կուր, օր մը պալօ էրթալու կուր, օր մը

հարս ու կեսրոջ կռիւ, որ մը ֆօֆօզութեան
սէպէպով կռիւ, որ մը նամակի՝ անվըօքի
կռիւ. հապա՞, էրիկը կնկանը նամակը բա-
ցեր է եղեր, ինչ հախ ունի եղեր: Էվրօբայի
մէջ նամակ բացողին ծառքը կը կտրեն էղեր.
նամակ բանալ, անվըօք պատուել, հէմ
կնկան մը անվըօքը պատուել ասկէ մենծ
թէօհմէթ կ'ըլլայ եղեր:

Այս առանկ է, աս բաները խախլե-
ները կը խորատովին կոր: Խաղէթաներուն մէջ
Էվրօբայէն պատմութիւններ կը թարգմանուին
գիրք կ'ընեն. ինչ հաճէթ, ինչո՞ւ անխրտար
հեռուն կ'երթանք. խախլէները մէխանան-
ըր թող պտրտին, ու խաղէմը առնեն զրեն,
սօնսըզ բան կայ գրելու, նափիլէ մասրաֆ
կ'ընեն, ֆռանկսըզճա գիրքեր ու միծ բա-
ռարաններ կ'առնեն քի, չիւնքի պատմու-
թիւններու, — ուսման կ'ըսեն կոր ասոնց, —
ուսմաններուն լեզուն խրթին է եղեր: Պէ,
մենք ալ խրթինցանք: Հիմակու մարդիկը,
իլլէ զէմանէին կնիկները խօլայ չեն հաս-
կըցուիր կոր:

Ե. ՏԷՄԻՐԱԴԻՊԱՇԵԱՆ

Բ Օ Թ

Անցեալ շաբաթ քերս մամուլին յանձ-
նուած եր արդէն, երբ Մայրաքաղաքիս մէջ
սարածուեցաւ՝ Նիւ-Յօրքաքաղ Զովհաննէս
Է. Թալեանցեանի մահուան գոյժը:

Յաւեհ ողբացեալ բարեբար, իր ետին կը
բողու այրի մը եւ երկու դեռափքիք զաւակ-
ներ ի Նիւ-Յօրք եւ շատ կանուխ կը բաժնուի
բոլոր այն սնանկ աղփաներէն՝ որոնք իր կո-
րուսք կողբան այսօր եւ որոնց առաս ա-
ռաս կը հասցնեն՝ իր սրտաբուլի դրամական
նուէրները:

Հանգուցեալը երկու տարի առաջ գնահա-
սելով Հանրապետական մէջ իր բացած ալօլա-
մոլութեան դեմ մրցումին առթիւ ԼիւԼԱ ի մէկ
զաւեհական գրուածքը, կարեւոր գումար կը
դրկած եր իրեն՝ իբր քաջալերական:

Մեր համայնքին հետ Խմբագրութիւնս ալ
իր ցաւակցութիւնները կը յայտնէ՝ Այրի Տիկին
Թալեանցեանի, երկու հարազատներուն, ա-
նեծագին՝ Ազն. Միհրան Է. Մուրաթեանի,
ինչպէս նաեւ Արեւմտեան գերդաստանին եւ
բոլոր պարագայներուն:

ԵՐԱՆԻ ԱՆՈՆՑ

Քաթիւլ Մէնտէսի Բարիգեան հրեաները
կարդալէս անմիջապէս ետքը, կը մղուիմ,
բնականաբար, աչքի առջեւ բերել աննա-
խանձելի վիճակը հայ գրագէտներուն, որոնց
չարքին մէջ ամենէն յետին նստարանին վը-
րայ փոքրիկ, աննշան տեղ մը ունենալուս
համար երբէք զղջացած չեմ:

Բարիգի մէջ մեր Ֆրանսացի գրչի ընկեր-
ները հրեաներ են եղեր, աստ ալ բոլոր մըն է:

Մենք՝ մեր համայնքին մէջ պարզապէս
բոռոսներ ենք:

Մեզի գէշ աչքով կը նային, կէս մը կը
վախնան, հեռու հեռու կը փախչին, վար-
քերնիս կը քննադատեն, վարկ չունինք ի-
րենց մօտ, ուզած աղջիկնիս մեզի չեն տար,
թաղական չեն ըներ մեզ և մեզ իրենց տունը
թէյի հրամցնելէ առաջ տասն անգամ կը մը-
տածեն, մանաւանդ անոնք որ աղւոր կնիկ
մը և կամ սիրուն աղջիկ մը ունին ընտանի-
քին մէջ:

Եւ այս սխուր կացութեան պատճառը
մեր գէշ ըլլալէն աւելի՝ անոնց էջ ըլլալն է:
Ձէ թէ կը խնդրեմ, այլ կը ստիպեմ գծեղ որ
այս ըսածիս ճշմարտութեան հաւատաք:

Մենք բորոտներս՝ շատ քիչ ճանչցուած
և հազիւ հասկցուած ենք այն միջավայրին
մէջ ուր կ'ապրինք:

Մեզի չեն հաւնիր, բանի տեղ չեն դնել
սափրիչ Ոսկիանը, կօշկակար Օնիկը, իփեֆ-
նի Ղուկասը, մանիֆաթուրանի Գրիգոր ա-
ղան, սարաֆ Ագրիպասը և սեղանաւոր Կա-
րապետ Էֆէնտին:

Ասոնք և ասոնցպէսները աւելի աղէկ կը
նկատեն իրենց աղջիկը տալ ֆէս կաղապա-
րողի մը և կամ գիւղի մը մէջ Պօն Մարշէ
մը ունեցողին, քան մեր գրագէտներուն ա-
մենէն փայլունին:

Իրաւունք ունին այսպէս չարեւելու, այս-
պէս մտածելու: Փնտռածա այդ չէ, մանա-
ւանդ որ այժմ որ եւ է Ագրիպասի մը աղջը-
կան աչք չունիմ:

Դիտաւորութիւնս այդ կարգի անբանա-
րուն արարքը և կամ մտածելու եղանակը
քննադատել չէ: Այդ գործը ինձմէ աւելի

հեղինակաւոր գրիչներու կը թողում: Եւ եթէ չիտակը կ'ուզէք, ո՛չ կ'այսպէսեմ գիրենք և ո՛չ ալ կ'արգահատիմ իրենց վրայ, գիտնալով որ ատանկ Օննիկներ և ատանկ Ռափիկներ պակաս չեն Բարիդի մէջ ալ, ինչպէս նաեւ այն ամէն տեղերը՝ որ լուսաւորեալ կը կոչուին:

Ընդհակառակն ես՝ անոնց՝ այդ հեռիքներուն ախը կը քաշեմ, պարզապէս կը նախանձիմ իրենցմէ և բոլոր սրտովս երնէկ կուտամ իրենց:

— Երանի՛ անոնց, այո՛, հազար երանի, ոչ թէ որովհետեւ երկնից արքայութիւնը իրենցն է, այլ անոր համար որ ատոնք՝ կեանքի կառախումբին մէջ ճրի կը ճամբորդեն և մենէ աւելի հանգիստ կերպով կը հասնին այդ մեծ ճամբորդութեան *Hôtel Terminus*ը:

Անոնք և մենք դատապարտուած ենք մի և նոյն ճամբան կտրելու, սա տարբերութեամբ որ մեր ծովը միշտ ալեկոծեալ է և փոթորկալից, մինչդեռ անոնցը պոնաւա է շարունակ: Աւելին կայ, անոնք ծովախտէ ալ չեն տառապիր:

Ամէն բան՝ եկածին պէս կ'ընդունին անոնք: Մենք ամէն բանին ինչո՞ւն կը փնտռենք, իսկ անոնք քննի:

Կեանքը բազմակողմանի չէ իրենց համար: Աշխարհը իրենց մահալլէին ծայրը կը վերջանայ և հորիզոնը չափիին կամարներուն տակ կը սկսի:

Մարդկութիւնը կը կազմեն նախ ինքը, ապա զաւակները, կինը, հայրը, մայրը, եղբայրները, երբեմն ալ քեօին՝ եթէ փառլայն է, և անոր պատան՝ եթէ կուտ ունի: Ասոնցմէ դուրս, ինչ որ ըլլայ հոգը չէ:

Ինչ հեշտօրէն կ'անցընեն անոնք կեանքը: Առտուն կ'արթննան, կ'ուտեն, կը խմեն, գործի կ'երթան, դրամ կը շահին, իրիկունը խանութին կը դոցեն, չօնախներուն եեմիս կ'աւանդեն: Շաբաթ օրերը կ'ածիլուին, կիրակի օրերը ժամ կ'երթան, երկու Չատիկը անգամ մը նոր հագուստ կը շինեն և երկու տարին անգամ մը մանչ զաւակ մը: Ազնիկ զաւակը չուզելովը եղած է:

Առողջ, գէր կ'ըլլան, մազերնին ուշ կը ճերմկի, երջանիկ կ'ապրին, և ընդհանրապէս կը մեռնին ստամոքսի խանգարումէ, և ուղղակի արքայութիւն կ'երթան:

Ինչպէս երանի չտալ ատոնց, ինչպէս...

Մենք՝ կեանքի ընթացքին մէջ տաժանակիր աշխատութեան կամաւոր դատապարտեալներս, մենք ալ անոնց պէս կը ծնինք, կ'ապրինք և կը մեռնինք, բայց այդ երեք շրջաններէն անցնելու համար, ինչե՛ր կը քաշենք, Աստուած իմ, ինչե՛ր...

Ջղային արարածներ՝ սիրտերնիս նեղ կ'ըլլայ. աչքերնիս տկար և մարմիննիս նիհար. բանէ մը համ չենք առներ, բանի մը չենք հաւնիր, մեր հոգերէն աւելի ուրիշներուն հոգերը մեր սիրտերը կը վիրաւորեն, մեր գործերէն աւելի ուրիշներուն գործին խելք կը հասցնենք, ուրիշներուն հաշուին մեր հոգին կը սեւցնենք, հիւսնո՞ղ կ'ապրինք և երբ կը մեռնինք, ապահովապէս ծանր, իւղոտ պատառներ կերած ըլլալնուս համար չէ:

Եւ երբ հազար չարչարանքէ, հազար յոգնութիւններէ, սիրոմաշուքներէ ետքը, սիրտը, հոգիդ, ուղեղդ մաշեցնելէ վերջը, կը հասնիս եթէ ոչ գրագէտ, բայց գոնէ գորգաքեալ մարդ կոչուելու արժանիքին, անդին մեր հեռիքները, փողոցէն քալած ատենդ՝

— Պօ՛ւ մարդը կ'անցնի կոր, պիտի ըսեն: Իրաւունք, հազար անգամ իրաւունք ունին:

Խելացիները անոնք են:

Քանի որ մէկ կէտէն՝ ծնւելն, մինչեւ միւս կէտը՝ մեռնիլը ճամբորդութիւն մըն է զոր ուզենք չուզենք պիտի կատարենք ես, դուն, Պ. Տէլքասէ, խուցնուրանի Օննիկը, Սառա Պէրնար, չամաքընի Հոռոփը, Մարքօնի, ճիլանի Սերորը, Ֆրանսուա Բօքէ, Նաշեֆեար Միհրան աղան, ամէն մարդ վերջապէս, ինչո՞ւ չընտրել ամենէն դիւրին, ամենէն կարճ, ամենէն հեշտին կերպը այդ ճամբորդութեան:

Անոնք՝ երանելիները, կը բաւականան երբ գոց գիտեն Սաղմոսէն երկու տուն և չորս գլուխ աղօթք, լուսինը կը սիրեն որովհետեւ Ֆեմեք գործածելու հարկէն կ'ազատէ զիրենք, արեւը կը պաշտեն որովհետեւ չամաքընիները չորցնելու կը ծառայէ, զաւակնին կը սիրեն որովհետեւ ատոնք ալ մեծնան նէ իրենց պիտի նային, օդի կը խմեն մեզի ու տելու համար ետեւէն, կը կարգուին դուրս

փարա չուտելու համար և կանուխ կը պառկին բէքթօլը խնայելու նպատակաւ:

Կարելի է չպաշտել այդ արարածները և չնախանձիլ անոնցմէ:

Իսկ մինք՝ բորոտներս, պատառ մը հացին սիրոյն, ընկերութեան մէջ մեր գրաւելիք պրտըտիկ անկիւնին խաթերն համար, սատանան պոչէն կը քաշենք, հազար կտոր կ'ըլլանք և վերջ ի վերջոյ փոսի մը մէջ կը տանին կը նետեն մեզ, առանց մարմարիոնի կրտորի մը ողորմութիւնը ընելու մեզի:

Աս չէ՞ զարգացած մարդուն ճակատագիրը մեր մէջ և par le temps qui court.

Որով հոգ և ինչերնուն պէտք եթէ դուն դպրոցին մէջ երեք չորս լեզու և քանի մը գիտութիւն սորվելէ ետքը ինքզինքդ բանի մը տեղ դրած, կ'ուզես քու տեղդ ունենալ զարգացեալներու դասին մէջ:

— Փարա վաստկելու ճամբան գիտե՞ս, ա՛ն նայինք, կ'առարկեն:

Bon sensի խոշոր dose մը կայ սակայն այդ անարգանքին մէջ զոր ստէպ մեր երեսին կը նետեն:

Մենք չիտակ ճամբան կը թողունք, դիւրին կերպով ապրելու եղանակը կ'անտեսենք, փշալից արահետներէ կ'ընթանանք, միշտ սորվելու, գիտնալու հիւանդութենէն կը տառապինք, հալ ու մաշ կ'ըլլանք, առանց սակայն լաւագոյն կերպով ըմբոշխնած ըլլալու կեանքը զոր թերեւս անոնք մինչ աղէկ կը վայելեն, ոչ զարգացածները:

Իբրեւ թէ բաւական չըլլար ինչ որ կը սորվինք դպրոցին մէջ, պէտք է անկէ դուրս ալ սորվինք, գիտնանք, գիտենք, աշխատինք, իմանանք ձեռքէ չհանելու համար զարգացածի մեր տիպոսը, որ իբրեւ իսկական արժէք, արծաթ ապարանջանի մը չափ կարեւորութիւն չունի նոյն իսկ սառածներուն ամենէն բարեացակամին քով:

Քանի որ անոնց պէս և գուցէ անոնցմէ առաջ պիտի մնունք, ինչ հարկ կայ որ գիտնանք Հռոմայեցւոց պատմութիւնը, երկնային մարմիններուն թիւը, արեւին հեռավորութիւնը, լուսինն քնակելի կամ ոչ-քնակելի ըլլալը, երկրագունտիս որքան կշռելը, երկրաչարժերու պատճառը և հրաբուխներուն արդիւնքը:

Այս գլխաւոր գիտելիքներէն դուրս միւլոնաւոր բաներ կան, զորս ամէնքն ալ պէտք է ճանչնանք կամ գիտնանք: Կրնա՞ս չգիտնալ աշխարհագրութիւնդ, թուաբանութիւնդ, գրահաշիւդ, երկրաչափութիւնդ, կըրօնքդ, հին և նոր ազգաց պատմութիւնդ, ոտանաւորի կանոնները, մարդակազմութիւնը, անտառաբանութիւնը, բուսաբանութիւնը, չեմ ըսեր, բայց գոնէ քիչ չատ մարդու պէս:

Ասոնք ալ չեն բաւեր: Կրնա՞ս զարգացած կոչուիլ, առանց կարդացած ըլլալու Ս. Գիրքը, Շնորհալին, Խորենացին, Ֆէնէլիսին, Տելեմաքը, Լա Ֆօնթէնը, Ռուսօն, Շէքսպիր, Շոքէհաւէր, Պայրըն, Միլթըն, Հիւսօ, Հոմերոս, Վիրգիլիոս, Ռեմոն, Լամոնէ, Ժիւլ Սիմօն, Աբրահամ Ալվազեան, Լամարթին, Միւսէ, Լըկուվէ, Մոլիէռ, Բօնէյլ, Ռասին, Ջօլա, Պալզագ, Լը Սափ, Պօքաչիօ, Ժիւլ Վէռն, Լօնկֆէլօ, Ռիւտեարտ Բիլլինկ, Տիւմա, Պուրժէ, Մարկրիթները, Տը Կօնքուր եղբայրները, Տօմէ և tutti quanti. Աւելորդ է ըսել թէ ամէն օր պէտք է կարդաս Բէչեանը, Արամ Անտօնեանը, Փայլակը, Որբերեանը, Թէոդիկը, Մէրսէտէսը, Ջարուհին, Նաթանեանը, Հորոն, Նուրհանը, Լիոնֆէն, Սիպիլը, և toute la baraque.

Ասոնք ալ չեն բաւեր: Պէտք է նաեւ գիտնաս թէ ո՛ւր և ե՞րբ ծնած է Վէրլէն, Հիւսիսային բեւեռը գացողները ինչ եղան, ինչ տեսակ կօշիկ կը հագնի Բիլլընը, ո՛ւր կ'ածիլուի Չէմպլըն, քանի՞ նոտաւ Աստուանի ռեգրօվուառը:

Եւ անօթ ըլլալու եւ չօթէնթօթներու բարքերուն և դիւանագիտական դարձուածքներուն, պէտք է գիտնաս բոլոր հիւանդութիւններուն անուանները և բարեկամութիւններու կրքերը եղած տեղերը:

Ուզես չուզես պէտք է գիտնաս թէ ինչ են sauce remoulade, cailles sur canapén, Ֆօրիմ-հեմսը և Բինկ-Բօնկը:

Անշուշտ կը հասկնաք թէ չէի կրնար աւելի ընդարձակօրէն մանրամասնել այն ահագին պաշարը զոր զարգացած մարդը իր ուղեղին մէջ պէտք է ունենայ:

Գրագէտները՝ տասն անգամ, հարիւր ան-

գամ աւելի բան գիտնալու են քան սովորական զարգացածները:

Եւ ի՞նչ է այս ամէնուն արդիւնքը, վարձատրութիւնը: Ոչինչ:

Ֆրանսայի մէջ հրէշներ ասոնք և մեր մէջ պօս մարդիկ:

Անոնք իրաւունք չունին հիմայ, անոնք որ զարգացած չեն:

Անոնք, ինչպէս ըսի, մենէ աղէկ կը վայելեն կեանքը:

Եւ որովհետեւ մենք գրքերը, ուսմունքները, գիտութիւնները կլլած ենք, ի՞նչ տարբերութիւն ունինք անոնցմէ:

Անոնց, ինչպէս նաև մեզի համար երկինքը միևնոյն կապոյտը ունի, լուսաւորները նոյն փայլը ունին, ծաղիկները նոյն բոյրը, պտուղները նոյն համը, զեփուռը միևնոյն անուշութիւնը, թռչունները միևնոյն դայլը, կիները միևնոյն գգուանքները և մահը միևնոյն սոսկումը:

Կ'արժէ՞ր ուրեմն տարբեր ըլլալ անոնցմէ:

Անոնք մենէ շատ կ'ապրին, աւելի շուտ կը մարսեն կերածնին, աւելի հանդարտ կը քնանան, և ան սէրը ու գգուանքները զորս իրենց կիներու թեւերուն մէջ կը գտնեն, աւելի պարզ են, նուազ արհեստական, աւելի անկեղծ և աւելի տեւական:

Երանի՛ անոնց:

Յ. Ա. ՓԻՍԱՐ

ՍՏԱՄՈՔՍԻՆ Ի ՆՊԱՍՏ . . .

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ԿԱՐԿԱՆԴԱԿ

Հալեցուցեք 500 կրամ լաւ տեսակ կարագ առանց ալրելու. կրակէն վար առեք եւ երբ քիչ մը պաղի աւելցուցեք. 500 կրամ ձեռնած շաքար, լեմոնի մը կեղեւը (ֆերթելով) եւ երեք հաս հաւկիթ: Ասոնց ամէնը իրար խառնեցեք ալիւրի հետ մեկտեղ մինչեւ որ խմորը գործածելի դառնայ: Երկնցուցեք այս խմորը մաս մաս պտրելով քիչ մը ձգեցեք, երբ կենալով քիչ մը քանձրանայ, փոքր մասերու վերածեցեք ու հաւկիթի ջրախառն դեղնուցով կտրուներ պատեցեք (վրձիմով մը) եւ փուրը դրկեցեք:

Խոհարար

Պօրասանճի-խան ՂԱԶԱՐՈՍ ՔԵՍԵՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԿԻՆ ԿՈՒԶԵՄ . . .

ՈՐ ԱՄՈՒՍՆԱՆԱՄ

[ՖԱՆԹԵԶԻ]

Ֆանթեզիսթ՝ ԷՍՍԷԻՆ

Անունը կուգեմ ըլլայ Արմինէ,
Եւ օժտուած անբիծ, ներմակ մարմինէ:

Մեղրամուրի դեմք, բայց ոչ շատ դեղին,
Որ չ'ըլլայ գերին՝ բրժիճկին, դեղին:

Բարեձեւ քիթ մը՝ նրման արմալի,
Այրող մեղքընող, աչքեր վառ մալի...

Շրթունք՝ ի՞նչ գոյն է նորահաս կեռաս,
Որ կարծես կ'ըսեն, «հոս եկուր կեր աս...»:

Ակուանք մը զուտ, անգին մարգարիտ,
«Ոսկերի՛չ, բեր հո՛ւս, բու անհամար փառիս»:

Պաշար: Չկայ: Ահա՛ քեզ յարմար առիթ,
Հաշուէ՛, գին կրնայ գտնել բու մասիդ:

Հապա ի՞ր ձայնը, գեղգեղ սոխակի,
Կամ մեղմիկ ձայնը, ջուր հոսող ակի:

Մազերն ու յօնքերն՝ գոյնը սեւ սաքի
Ծոծրակը վիզը, ներմակ, գոյն կաքի:

Հասակ չափաւոր, ոչ գեղ ոչ նիհար
Քալուածք մը շատ շիք, չը տեսնի յար:

Լանջը չ'ըլլայ նեղ, նրման պիծակի,
Կարծես պիտ' ասնի, մեջքն մի ծակի...:

Գիրուկ քեւերով ձերքեր՝ գեղ, փափուկ,
Որոնց հպած չըլլան՝ քրքունքներ պապուկ:

Նրբաքել ժանեակ, մասները հիւսէն
Մօշկներն առնէ, մեկէն ու միւսէն:

Մանրերիկ ոտքեր, բայց սրունք լեցուն
Որ խիստացնեն՝ աչք ամենեցուն...:

Կ'ուզեմ որ խօսի մաքուր Հայեվար
Շատ պարկեշտ ըլլայ, աչքերն հայի վար:

Ասոնց հետ մեկտեղ, քիչ մը դրամի համ
Տալու է քիսքիս... որ ամուսնանամ:

ԱՆՄԵՌՈՒԿ

(Ա. ԳԵՐԳԳՅԱՆ)



N'EST-CE PAS VRAI?

Բարին Աստուած վեց օրուան մէջ ըստեղծեց զայնսար՝ և եօթերորդ օրը հանգիստ ըրաւ կ'ըսէ Ս. Գիրքը, n'est-ce pas vrai?

Մենք:

Հակառակ վեց օր՝ չապիկնիս քամուելու աստիճան քրտնաթոր տշխատելուս, եօթերորդ օրը որ կիրակի է փախանակ կոնակնիս բարձին հանգիստ առնելու՝ բորթ-մօնէ ի ձեռին, արշալոյսին հետ դուրս կ'իյնանք, թէ՛ ալ աւելի յոգնելու և թէ՛ վեց օրուան յոգնութիւննուս վատտակը մոխելու համար: Այս ալ իր կարգին... n'est-ce pas vrai?

հաւատացէք, սա ամրան կիրակիները, մեր գլխուն մէկ մէկ ծուլուոր իորձանքներ են, որոնց երեսէն քաշածնիս՝ մէկ մը ուղերնիս, մէկ մը սաամօքսնիս, մէկ մալ քրտակնիս գիտն... n'est-ce pas vrai?

Շատեր շոգենաւի երկնեռի պէս ժամանակացոյցներ ունին, զորս կը գործածեն իբրեւ ուղեցոյց կամ boussol: Առաւօտուն tout endimanché երբ փողկապնուն épingler գովնոյի զետեղելու համար վերջին ակնարկ մը կը ձգեն հայելիին մէջ, կիրակիի carte journée ձեռք կ'առնեն այս կամ այն զբօսավայրը, գլուղը կամ ալուր երթալու համար, իրենց ետին ձգելով՝ փոտած քոյր մը, որ լալկան դիմօք կողաչէ հետ գալ, և կամ մանկամարդ կին մը, որ վերջին անգամ չինած բլիսէ ժիւքը ցոյց տալու մարմնջէն կաս կարմիր կտրած՝ թեւերէն ոտքերէն կը քաշեն այդ կարգի ամուսիններուն, և սակայն կըրկին տունը կը մնան... n'est-ce pas vrai?

Թօփ-գափուի sardine à l'huile տուներու մէջ խաշող տիկիներ և օրիորդներ, Սկիւտարցիներու ondulé մազերը խանգարող հովին ախը կը քաշեն և կը փափաքին նոյն իսկ կիրակի մը հոն գտնուիլ՝ վեց ամսուան հովը ութը ժամուան մէջ կուլ տալու համար: Եւ

vis-versa, Սկիւտարցիք ալ իրենց կարգին կուզեն, հոգի կուտան Բերա երթալու այն տաք կիրակիները, յորում տեղացիք հազու լուսցած թէ չէ, ինքզինքնին կամուրջ կը նետեն իղզիները ցրուելու մտօք: Սառ-հար ամառանոց գոցողներ, առիթը կը փնտռեն կիրակի մը Գում-գարու վիզիթ մը ընելու, և Մագրի-գիւղի լոտոսարոյր հովէն զվուող ընտանիքներ, Խաս-գիւղի Պատէմիխին համար չաղիկ կը վազցնեն: N'est-ce pas vrai!

Վերջապէս ամրան սա ներկայ եղանակին կիրակիները կարելի է նմանցնել խոշոր և պոչուոր բիրեներու, որոնք առաւօտէն կսկըսին խածնել և զըբ զըբ ցատկցնել ամէն անոնք՝ որոնք սովոր են այդ օրին անպատճառ պորանիին դուրս ձգել, ինչպէս դուք ալ նշմարած ըլլալով կը հաստատէք ըսածս n'est-ce pas vrai?

Մարգս ոչխարի կը նմանի կըսեն, և իրօք ալ ատանկ է: Անցեալ կիրակի երբ առաւօտուն պատուհանիս առջիւ նստած Սինանեան-Մարկեան concoursին վրայ կը մտածէի, faute de mieux, տէքիս առջիւ պարզուեցաւ Royal viwef պատկերներէն ալ բնական սիկնմա-բօկոսմի թապլօ մը. երբ անթիւ անհամար ընտանիքներ, աղայ, կին, աղջիկ, բոլորն ալ մէկ թէլի վրայ հաղուած, ինչպէս կը սիրէ ըսել Լիլա, տանս առջեւէն կանցնէին: Եկեղեցի չէր դացած տեղերնին, քանի օր Սթաթէնի չիչերուն ոսկեղոծեալ ծարերը բացիներէն դուրս ցցուած էին: Թաարոնի համար այդքան կանուխ դուրս չէր ելլուէր, պարտէզները տմայի պէտք էին ըլլալ այդ պահուն: Ուստի մտածեցի թէ՛ ասոնք անպատճառ կիրակին վայելելու համար ճամբայ ելած էին, n'est-ce pas vrai?

Ուան, բու, բոփ:

Մէկ ոստումով կառտոսպիս մօտը գացի,

— Երանի ինծի որ կառուածայ ունիմ հէ՛... —
բայց քանի որ որոշած չէի ուր երթալիքիս,
սկսի մը վարանեցայ, ինչ քօթիւմ պէտք
էր հագնել, ինչ գոյն... Սկիւտար երթա-
լու համար gris քօթիւմ մը անհրաժեշտ է
որ մարդ կանակը անցնէ, վերին ոսկոր դա-
ցողը պլեօ ֆօնսէ ձեռք մը լաթ եթէ չունի,
սեղը թող նստի, կղզի երթալ փափաքող-
ներ՝ անպատճառ à l'amiral ձերմակ բանքա-
լօն մը ունենալու են, գոց գոյն ժաքէթով,
իսկ Սամաթիա, Գում-գարու, Եէնի-գարուի
համար անպատճառ բաւսկիւ մը թեւին վը-
րայ անհրաժեշտ է: n'est-ce pas vrai?

Ո՛ւր պիտի երթայի:

Էվոէքա!!!

Բարեկամիս մէկէն ընդունած հարսանե-
կան հրաւիրագրիս բառերէնք քանի մը կը-
տարներու բամբակով՝ ամէն մէկուն վրայ
գրեցի, Կ. Պոսոյ կիրակիները դրօշակու-
տանով վայրերը և զանոնք պղտիկ պղտիկ
ծրարելով գլխարկիս մէջ գրի և սկսայ շար-
ժել: Չեղաւ: Պէտք էր ուրիշ օտար ձեռք
մը, որպէս զի առանց խարութեան և խար-
դախութեան հատ մը քաշեր և ինծի տար,
որպէս զի ըստ այնմ գործադրէի: N'est-ce
pas vrai?

Ա՛խ... Ա՛խ, չար աղջիկ. այն օրը երբ
մայրիկիդ խօսքին անսալով ձեռքս չի մեր-
ժէիր, հիմա այս թուղթերէն հատ մը քա-
շելով՝ թէ գործս տեսած կըլլայիր և թէ
հետս գալով գեղեցիկ կիրակի մը կանցնէինք
միասին: N'est-ce pas vrai?

Ինչ և է, հիմա ասեմք չէ Ալիսին այդ
անխելքութեանը վրայօք ձառելու, passons
le deluge!

Գտայ...:

Մինեւ, որ սենեկիս մէջէն չի դատուիր,
հատառորիմ մեքսիսի մը պէս, միտելով
մէջքը կուռեցնէր ու պոչը ոտքերուս կը քը-
սեր, կնիւնս տեղ, «ինծի ալ հետ ասը» ը-
սել ուղեւոր գողցես: Ուստի բոլոր թղթիկ-
ներուն վրայ մէկ մէկ քիչ հոտ քսելով՝ ներ-
կայացուցի Մինէիս, որպէս զի՝ որը որ առա-
ջին անգամ հոտոտեր կամ խածնելու փորձ
մը ընել աղ ըլլար որոշած վայրը նեղակայա-
ցող կիրակիի ժամանցիս համար: N'est-ce
pas vrai?

Փորձիս մէջ յաջողեցայ: Փիսիկս, վարժ
ձեւով մը, որուն նմանը Լէօնիտաս անգամ
չպիտի կրնար փորձել, թուղթ մը խածնելով
աստին եկաւ, առանց գիտնալու թէ ըրած
իշխալարութեանը համար փոխանակ չոյուե-
լու՝ ծեծ ալ պիտի ուտեր վերջը:

Մինէիս քաշած թուղթին վրայ Սալմա-
թոմրուիս գրուած էր . . . :

Ամէն քանի մէջ փոփոխամիտ եմ, il faut
que je vous dise, նոյն իսկ երբ օր մը նշան-
ուիմ, ու հարսնիքին օրը քահանան զմեզ
գլուխ գլխի, ձեռք ձեռքի ապ, կրնայ ըլ-
լալ որ, սեւ ուրտէնկօթն հոն ձգեմ և կծիկը
դնեմ... բայց այս անգամ որոշումս որո-
շում պիտի ըլլար... եթէ... (ախ կը տես-
նաք որ Սալմաթոմրուիս անունը անգամ գը-
րած ժամանակս վրաս գէշութիւն կուգայ):

Երեւակայեցէք երիտասարդ մը որ Բե-
րայի քարտէսը պատրաստած, Եէնի-գիւղի
բարիքսը կերած, Բըթի-Շանի պարտէզը վա-
յելած, և աղուոր կնիկներուն քեզը պատ-
րաստած է, կրնայ ըլլալ որ կիրակին երթայ
մեռացնել Սալմա... ա՛խ, մնացեալ վանկերը
գուք շարունակեցէք: N'est-ce pas vrai?

Ժամը երկուքն է առաւօտեան, et je
commençais ma toilette:

Առանց խորհելու և կամ կանխամտածու-
թեան, ձերմակ բանթալօն մը հագեր եմ,
չեմ գիտեր, կռեմա քաւլաթ մը և պլեօ
ժաքէթ:

Վերջին անգամ հայելին նայելուս անդ-
րադարձայ ամբողջութեան, որ ինչպէս վե-
րերը յիշեցի, Բոխմիքօի ստարալն էր:

Եւ հագիւ աւարտած թէ չէ...:

Ա՛... ներեցէք, չպիտի կրնամ շարու-
նակել, յիշելով կամ յարգելով ազնիւ բա-
րեկամիս Լիլիի խնդրանքը, որ կը կրկնէ
միշտ «թերթիս սիւնակները ինայէ...» որ-
պէս զի չեղայ խմբագիրն աւրէ, n'est-ce
pas vrai!

Ուրեմն ձգեցէք որ չոգենաւ մտնամ, յա-
ջորդ անգամուան նիւթ ծծելու համար:

Pardon Mademoiselle voulez-vous accepter
mon bras?

ԲՈՊՈՍ.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Յարգելի Դերասանապետ՝ Մնակեան էֆ. նախորդ շաբթուան Հանրագիտական մէջ պատիւը ըրած էր թատերական յօդուածիս մասամբ պատասխանելու:

Ես դիտաւորութիւն չունէի և չունիմ ալ — ինչպէս ինքը կ'ըսէ — ուրիշներուն ներքինը պըրպըտելու ու հաշիւ պահանջելու, իմ ըսածս պարզ կարծիք մ'էր որ մի եւ նոյն ժամանակ ընդհանուրին ալ եղած ըլլալը կը գուշակեմ:

Թատրոնը՝ որչափ որ անհատական գործ մը ըլլալէ աւելի հանրութեան կը վերաբերի, դարձեալ ժողովուրդը իրաւունք չունի ներքին կազմակերպութեան խառնուելու, սակայն ազատ է իր կարծիքը յայտնել, ըլլայ օրինաւոր կամ ոչ:

Մնակեան էֆէնտի կ'ըսէ թէ «մէկին կամ երկուքին բացակայութիւնը գործին համեղութիւնը չի պակսեցնէր, վասն զի բէբէթութեամբ այնչափ հարուստ է որ, մէկ կարեւոր անդամի բացակայութեան մէջ այլեւս անոր գլխաւոր դեր ունեցած խաղեր չեն դրուիր, և այս կերպով խումբը կարող կ'ըլլայ իր ներկայացումները շարունակել առանց խաղերուն համեղութիւնը կորսնցնելու»:

Երբէք չէի ըսած և չեմ ալ ըսեր թէ, եթէ Ալիքսանեան էֆէնտի չըլլայ ներկայացումները բոլորովին կը դադրեն, քանի որ վստահ եմ թէ, եթէ նոյն իսկ Մնակեան էֆ. ալ չի մասնակցի՝ նորէն խումբը կրնայ շարունակել իր գործը, խաղերը յարմարցնելով անշուշտ:

Սակայն հասարակութիւնը այն ատեն գոհ պիտի մնայ ներկայացումներէն, խնդիրը հոս է, միթէ չպիտի փնտռէ Մնակեանը, և կամ Մնակեանի դերը կատարող դերասանը պիտի կրնայ ժողովուրդին գոհացում տալ, ասիկա անկարելի ըլլալը բացայայտ ճշմարտութիւն մ'է որ երբէք առարկութիւն չի վերցնէր:

Դերասանութիւնը հիմա արուեստ մը ըլլալէ աւելի արհեստի կարգը անցած է դժբախտաբար: Վաճառական մը ապրանքը կը բերէ որո՞ւ համար, անշուշտ հաճոյքի մը համար չէ, այլ իր յաճախորդներուն գոհա-

ցում տալով՝ բուն իսկ իր շահուն համար: Դերասանութիւնն ալ ասկէ տարբեր բան մը չէ:

Մնակեան էֆէնտի նաեւ կ'աւելցնէ թէ. «ես Պարոն Ալիքսանեանի համար բնաւ կաբուորութիւն չունեցող մէկն է չեմ ըսեր»:

Թող ներուրի ինձ ըսել թէ՝ հոս բնաւ բառը շատ տգեղ փախեր է, չըսեմ կոշտ, հէ՞ Պապա Մնակ:

Ինչպէս ըսի նորէն կը կրկնեմ թէ՝ առանց Ալիքսանեանի՝ Մնակեան ոչինչ կարժէ գէթ բեմին վրայ, և բնականաբար առանց Մնակեանի ալ՝ Ալիքսանեան ոչինչ:

Հիմա ալ միզի կը մնայ շնորհաւորել երկու արուեստագէտներն ալ, որոնք կրցան վերջ մը դնել իրենց հաշիւներուն ու զիրենք քաջալերել իրենց այս նոր միութեան առթիւ:

Յովնդութիւն:

* * *

Մնակեանը ե՞րբ պիտի գայ, այս շաբթու կուգայ, միւսին, ինչո՞ւ չպիտի գայ, թօհա՞ֆ . . . :

Գրեթէ Մայիսէն սկսեալ այս խօսքերը կը լսուէին բոլոր Սիւլտարցիներէն, մինչև որ վերջապէս Մնակեան խումբը վերականգնուած հաճեցաւ իր անդրանիկ ներկայացումը տալ անցեալ շաբթու Սիւլտարի մէջ:

Ներկայացուելիք խաղին անունը «ժազ-Վարլէյ», արդէն գրաւական մ'էր թատրոնը լեցուելուն և իրօք ալ ահագին բաղմութիւն մը կանուխէն գրաւած էր բոլոր օթեակները ու նստարանները — ինչպէս կ'ըսեն — ասեղ ձգելիք տեղ չմնալու աստիճան:

Թատերական յօդուած մը մրոտողները անպատճառ բան մը կը գտնեն մէկը կամ միւսը քննադատելու, տեղը կայ թէ չի կայ — խնդիր չէ, — ասիկա սովորութիւն դարձած է, չպիտի ուզեմ ես ալ անոնց նմանիլ, քանի որ կրկնութիւններէ տարբեր բան մը չպիտի ըլլան ըսածներս: Միայն թէ դերակատարները շատ աւելի յաջող պիտի ներկայս յնէին իրենց դերերը՝ եթէ երբէք յոգեկամ չըլլային, այսու հանդերձ շատ փալուռ անցաւ ներկայացումը:

Ալիքսանդան էֆէնտիի միանալով Մնակեան խումբը սկսաւ նոր մղում մը տալ խաղերուն, ընտրելով այնպիսի տրամներ՝ որոնց մէջ զգացման ու մտքին հետ մէկտեղ գործողութիւնն ալ իր բաժինը ունի:

Սկիւտարցիք որ միշտ գիտցած են գնահատել Օսմանեան թատերախումբը և որուն հաստատ ազացոյցը տուին անցեալ շաբթու, անշուշտ պիտի շարունակեն իրենց համակրութիւնը հանդէպ խումբին, և այն ատեն իրաւունքը պիտի ունենան պահանջելու իրենց ճաշակին գոհացում տալիք խաղեր:

Նաև փափաքելի է որ յարգելի խումբը հաճէր նաեւ համաձայնիլ մեր առաջնակարգ դերասանուհի Տիկին Հէքիմնանի հետ, և այսպէսով ստանար իր նշխարին փայլուն դիրքը:

ՆԵՐՇԱՊՈՒՆ

ԽՕՍՔԵՐՈՒ ՏԱՐԱՓ

ԼԵՑՈՒՆ ԿԱՍ ՊԱՐԱՊ

— Կիներու վրայ ի՞նչ գաղափար ունիք:

— Կիներու վրայ գաղափար մը ունենալու համար անպատճառ պէտք է լաւ մը կազապարուիլ կիներէ:

— Ի՞նչ է կնոջ սահմանը:

— Կինը հրեշտակ մ'է՝ երբ կոյս է, մարգարիտ անգին՝ երբ կին մ'է, մսակեր ագռաւ մը՝ երբ պառաւ մ'է:

— Ինչու կնոջ մը շատ անգամ անմեղ կըսուի:

— Անոր համար որ՝ փոխանակ ինք մեղքը մանելու, միշտ կը հարկադրէ դիմացինը մեղքը խոթել:

— Ինչո՞ւ մարդիկ կիները շատ կը պաշտպանեն:

— Անոր համար որ՝ կիները շատ անգամ էրիկ մարդոց պաշտպան են, քանի որ անոնց մէկ մատին ծայրին ունեցած զօրութիւնը ու տեսած գործը իմ քսան մասներս մէկտեղ չեն կարող տեսնել:

— Որո՞նք կիներու կը սիրահարին:

— Կեանքէ ձանձրացողները, անձնաուպանութեան ամենէն դիւրին ճամբան եղած ըլլուն համար:

— Ինչո՞ւ կիները էրիկներն կը խաբեն:

— Իրենք արդէն ուրիշէ մը խաբուած ըլլալուն համար և յետոյ էրկնէն կատարեալ վատահոլութիւն վայելող կնոջ մը համար ապէ գիւրին ու ատկէ դժուար բան չիկայ:

— Ինչո՞ւ կինը շատ անգամ կըլլայ հրպարա ու գողող:

— Զի քաջ գիտէ թէ տարփանքը միշտ իր դիմացի մարդը կընէ տխմար ու մորոս:

— Ե՞րբ պէտք է հաւատալ կնկան մը խօսքին:

— Երբ գրպանիդ մէջ լեցուն է ոսկին:

— Պէ՞տք է հաւատալ անմեղ սիրոյ:

— Երբէ՞ք, քանի որ սէրը մեղաց հեշտ ու ծաղկազարդ նախադուռն է:

— Ի՞նչ է բանաստեղծական սէրը:

— Կատուին ճիլերին չի հասնելուն պէս պի՞ր տիւզ միւսելը:

— Կնկան մը համար ո՞վ է ամենէն լաւ ամուսինը:

— Այն որ կնոջ սուրճը բոլոր բեռերը յօժարակամ կը կրէ ուսին:

— Սէրը իր մէջ ի՞նչ կը պարունակէ:

— 10 կրամ անծայրածիր խենդութիւն, 14 կրամ վերջին ծայր ապուշութիւն, 15 կրամ անհաւատալի ինքնամոռացութիւն, 20 կրամ անտանելի ստրկութիւն, 20 կրամ կամաւորական բաղաժամակրութիւն, 60 կրամ կեօզ կեօրէ պախարքեօնութիւն, 85 կրամ աներեւակայելի ներողութիւն, 18 1/2 կրամ անհասանելի անձնութեամբութիւն, 95 կրամ անհանդուրժելի տանջանկ և անբժշկելի ցաւադարութիւն, և մանաւանդ վերցուցած ինչափ անըմբռնելի կենդանաբանութիւն:

— Մեր դեռատի պատանիներուն ու մաաաղ օրիորդներուն համար կանխահա սէրը ի՞նչ տեսակ հիւանդութիւն մ'է:

— Ինքնասպանութիւն (որ թարգմանի էշ նահատակ):

ԽՕՍՔԱՆՈՍ

ՍԿԻՒՏԱՐԻ ԿԻՐԱԿԻՆ

[ՏԵՂԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾ]

Երբ ձեր ճամբուն վրայ հանդիպիք այր կամ կնոջ մը, որուն կզակին տակ կեռսանը չորս մատ վար կախուած է, ամէլու մօտ եւ զող խազի մը պէս, գիտցէք թէ այդ էակը նոյն իսկ և բուն իսկ Սկիւտարցի մըն է որ կը յոխորտայ իր անզուգական Պէյլէրի պարտէզին համար:

Սկիւտարի մէջ շատ մը մանկապարտէզներ կան, բայց կանոնաւոր պարտէզ մը ... հատ մը միայն, Պէյլէրինը:

Իճատիէի հրապարակին վրայ (հա՛, կեցէք որ դեռ չսկսած երկու խօսք ուղղեմ պարտէզին տիրոջը, հասկցնելու համար իրեն թէ ուէքլամ մը չէ որ պիտի ընեմ, այլ քիչ մը նշեմ իմ պիտի ըլլամ, մի եւ նոյն ատեն եյլէնսիրմիւ ընելով իմ 3848 օթլախճիներս, որոնք չորս աչքով Լիլաին կսպասեն և կամ գրութեանը, խնդիր չէ), ինչ կըսէինք կոր, այո՛, այդ հրապարակին վրայ մինիսիկ դուռ մը կայ, ուրկէ ներս մտնողը Եղէմը կը յիշէ, այնքան գեղեցիկ, այնքան վայելուչ և այնքան ճաշակաւոր է ներքինը:

Մանկապարտէզի մը կարգ կանոնը, մանկապարտիզականութեն դուրս կուգայ, իսկ հանրային պարտէզի մը որ՝ ըսել է պիտաւոր չոճոխներուն և բուսուալը տիկիներուն զբօսավայրին ալ լաւ կադմակերպութիւնը՝ պարտիզականին և կամ բարոսնէն (այս բառը վաճառականի մօտ 60 զրուշ չաքաթականով քրտինք թափող va et viensները կրնան չի հասկցողներու թարգմանել):

Քանի որ պարտիզականին վրայ է խօսքը, յօդուածը սկսելէ առաջ երկու տողով ՚ի կարագրենք մեր ծանօթ Միհրանիկ աղան, որ այդ պարտէզին տէրն ու տնօրէնն է, և որուն չուղղուիր սակայն յօդուած կամ այլ գրութիւն, դրամ կամ բուլ:

Բաւական բարձր ծառէ մը տանձ մը փրցուցած ատեն պորտը չիյնալու աստիճան բարձր հասակ մը, որուն մօտ ես դու սա սա նաւն շատ գաճաճ կիյնանք: Լայնքը՝ ներք-

ցէք որ բացատրեմ, երեսի վրայ ճակատը գետին պառկելու որ ըլլայ՝ ինը տասը անգամէ բաղկացած ընտանիք մը լայնօրէն կրնան ճաշի սեղան մը տարքել, առանց սրունգնին իրար դպչելու վախը կամ կասկածը ունենալու: Ոտքերը այն թիւը ունին՝ զոր կարելի չէ գտնել հազարներու մէջ, և անպատճառ մասնաւոր չափու վրայ պէտք են շինուիլ:

Ձեռքերը՝ աւելի լաւ է ըսել թաթերը, այն աստիճան ուժեղ և լայնատարած, որու մէջ փափկասուն օրիորդի մը պարզ մէկ adieuն fkhif չօրպասի պիտի փոխուէր (արդէն ինքն ալ գիտնալով զայդ կարծիս, ճըմընը ըրինելու հանգէպ գլխով կը բարեւէ):

Գալով բարոյականին, պէտք է ըսել որ Միհրանիկ աղա մին է այն քառաբնիկսիքի տնօրէնութիւններէն (այս բառին թարգմանութիւնը Աշոտ Մատաթեանցի կը թողում), որոնց նմանը լամբ Լիւսով ալ դժուար է գտնել: Անուշ՝ միղբէն աւելի, հեղահամբոյր (պաչիկ ըսել չէ հա՛) որբեւայրի մը պէս, պարկեշտ, կարգ մը քահանաներէն շատ ու շատ վեր, քաղաքավար՝ չոգեկաւքի քօնտիւթթէօններուն քար հանելու չափ, վերջապէս տիպար անհատ մը որ բարձր համալսարանի մը տնօրէնը ըլլալու տեղ բազդը բերած նետած է զինք Պէյլէրին պարտէզի տընօրէնութեան, զոր կը վարէ կատարեալ ձեռնհասութեամբ և ամենուն գոհունակութիւնը չանելու աստիճանով:

* * *

Սկիւտարի րնակիչներէն անոնք, որոնք քառասուն զրուշ կառքի ստակ տալով՝ քառասուն քաշ փոշի կլլել չեն ուզեր, կիրակի իրիկունները կուգան վայելել Պէյլէրին պարտէզը, մաքուր սուրճին, պալ ջուրին հետ վայելելով սքանչելի կուպօփօն մը, որուն նմանը հազուագիւտ է գտնել:

Օգասուն վայր, հովասուն ծառաստան, նոր կըճըռ աթուռ, մէջտեղը աւազան և

քառքատ (խասխաթի բառը է), մէկ բըսքին, ամեսու, քաղաքավար սպասարկութիւն, քաշը տասնընոսնոց սուրճ, չիշ մը վճիտ քարծակողի ջուր, որուն գինը քսակ չի ծա-
կեր սակայն, մաքուր մօնս մը, կոկիկ քուա-
լէք, և à raison de plus, յիշտալուր կռամօ-
ֆօն անդադրում: Եւ այս բոլորը գիտէ՞ք
քանի ոսկի կամ քանի պանդնօթ ... (կա-
մաց կարգացէ՞ք որ իմացողին աչքին չի-
գայ) ... ՔՍԱՆ ՓԱՐՍԱՅ:

Եւ որովհետեւ անունա քաշքշող, բամ-
բասող, և ... միս ուտող ելած է (գըվըր-
ճըգ ըլլալը պայման առաջին) ուստի այսչափ
մը գովասանքէն վերջ ներեցէ՞ք որ սկսինք
մեր սովորած փորիկ բամբասանքին:

Սկիւտարցիք, որոյ ճակտին վրայ մու-
խուճնի բառը քանդակուած է կարծես, երբ
կուգան իբր կենդանի ծաղիկներ պճնադար-
դել այս սքանչելի պարտէզը, սովորութիւն
ունին զիրար քաշքշելու, իրարու վրայ խօ-
սելու և իրարու միս ծամծմելու, և ատոր
համար է որ Սկիւտարցիներէն շատեր երբ
հիւանդ կըլլան, ստամոքսէ կը տառապին:

Հիմա հոս վարը մէկ երկու օրինակներ
պիտի տանք Պէյլէրի պարտէզը կիրակի ի-
րիկունները վայելող ընտանիքներու խօսակ-
ցութենէն, չի մոռնալով սակայն աւելցնել
թէ, այդ ըստեկիքներուն մէջ ո՛ր եւ է անձ-
նական նկատում, կամ մասնաւոր ակնար-
կութիւն մը չիկայ, պարզ կատակի մը հա-
մար է որ պիտի գրենք, որպէս զի կարդա-
ցողն ալ խնդայ ու սամուռ բիւրի պէս Յուլիսի
այս տաքուն, վրան առնողն ալ զուարճանայ:

Ութը աթոռ գրաւող ընտանիք մը նախ,
որոնց եօթը պզտիկները կը վազվուտեն հոս
հոն, միշտ Միհրանիկ աղակի հսկողութեան
տակ, ոչ թէ իյնալով մէկտեղերնին սախտե-
լու, կամ հալուղը իյնալու վախէն, ա՛յլ,
պարտէզին պտուղներէն չեօփիհնմիւ չըլլալ-
նուն համար:

— Օ՛ր ... նոր աշխարհք եկայ գիտեմ
քի ... իւֆիւր իւֆիւր կը փչէ կոր ... եանի
ուրեարը չիգայ սա տեղին Պիստոս ... կըսէ
տիկին մը, որ բաթիթճան տօլմասին կրակէն
վար առած և տակը առնել չի տալուն խն-
դուքը ունի խոշոր բորին մէջ:

— Էյ հա սանքի, սանկ պախճա մը ու-
նինք տէ սըխ սըխ չհնք ի գար ...

— Քա ճանըմ, ես ալ կուգեմ քի ցերեկ-
ները պիլէ կարքս առնեմ գամ սըտեղը շուքը
նստիմ տէյի, ֆախաթ ուռուսումը տեսա՞ր
մի, մութլախ խուռսէ պիտի դ՛ես, շարխա
պիտի դընես անանկ գաս պիտի, ղէրէ վա-
խիթի վախիթսիզ սիւրիւ մը եէնի տիւնեա-
նեւ չըթգըւըլաւմ տուվալէթով կուգան կոր:

— Քա ինծի նայէ՛, սա վէրտիվէնէն վեր
ելլողը Ուստիկին հարսը չէ՞ ... , տա կէօզ-
լիկդ տուր նայիմ ... օռսա բօճա գալէլէն
ան ըմանցուցի ամա՞, չիւնքիւ օրերն է ը-
սին ...

— Էյ հայտէ, աս ասանկ աղըղլանմիշ
եղած սէպէպլին ալ դուրս կը հաննի եղէր ...

— Հիմաճուկուան տահէկները ասանկ
թէրթիպ կուտան կոր, կէօյեամ քի սըխ սըխ
դուրս ելան նէ խօլայ կը պերէն եղէր ...

— Սուս գայ կամաց, էօթէնը անկաճ
խապաւթմիշ կընէ կոր, բիւս բիւթիւնէ ծա-
րերը թող չիտանք ...

— Քա, տիրօրի՛ ... երէկ հարցուց քի,
քանի՞ ամսու է տէյի ... հիմա ճահիլ չիգայ,
բիւթիւնին աչկը ֆիհճան ֆիհճան պացուած
է ...

— Մեւքօն աղա, սանկ նայէ քի արեւը
աչկիդ մէջը չիգայ ...

— Ինչ, սանքի ըռէնկա սօլմիշ կըլլայ
տէյի կը վախնաս կոր ...

— Չէ ամա, պէօհիւղիւր չըլլաս տէյի
կըսեմ կոր ...

— Արեւէն պէօյիւղիւր չե՞մ ամա, սըտեղը
վարտիկ բանթալօնը բիճ մը նստեր է, տու-
տախին վերիթին թէլ չի մնաց փիթթեց հոս
նայելով, իշտէ անկէ պէօհիւղիւր կըլլամ
կոր ...

— Աման դուն ալ, կէնէ ղէնպէրէկի պէս
խուռուլմիշ մըլար Մեւքօն աղա, ինսան չե՞ն
մի, իրարու կը նային, ի՛նչ կըլլայ ...

— Նայելէն կրակ կըլլայ, կրակը ալէֆ
կըլլայ, ալէֆէն ալ չօճուի կըլլայ ...

— Էյ վայ մեղքիս, պուսու տա իչիթմէ-
միշ խիմ ... կըսէ տիկինը, քէչի տէրիսի
սկառքի՛լի ոտքը քովինին աթոռին սակի
փայտիկին վրայ դնելով և հովէն ծռած գըլ-
խարկը շտկելով:

Նոյն ատեն Միհրանիկ աղա որ միշտ կը
պտըտի կարգապահութեան հսկելու համար,
իրենց կը մօտենայ,

— Բարի իրինկուն ձեզ, հանգիստ էք, բանի մը պէտք ունի՞ք ...

— Օ՛ ... Ասծու բարին եւ վրուս, բէք ըստանալ ենք, դուն նասըր ես աղէկ ես ...

— Փառք Աստուծոյ, կերթանք կոր ...

— Քա վույ մըսեր, ո՛ւր կերթաս կոր, վայ խելքիդ, իշտէ առ չեղաւ ...

— Չէ, սանքի սանկ նանկ կերթանք կոր ըսի ... չէնէ ո՛ւր պիտի երթամ ...

— Հա՛ ... ոսնկ ըսէ, ես իսէ ... Ան չէ ամա քեզի երբ պիտի կարգենք ...

— Ատ թառափը կոճկէ .., կեցիր նա-յինք, տահա վախիթ կայ ...

— Վույ չորնամ մախսըմըս, տահա պըղ-տըտիկս ես, քիչ մըն ալ մեծցիր տէ հապա կարգենք ... ունդա՛ ...

Հեռուէն կը կանչեն, Միհրանի՞կ աղա՛ ... ու առանց պատշաճ պատասխան մը տալու կատիպուի բաժնուիլ հոգկէ։

* * *

Ուրիշ խումբ մը։

— Նայէ՛ տեսա՛ր, ստեղը եկանք նէ գէ՛շ ըրինք, հէմ փարանիս ճեպերնիս մնաց հէմ ալ վրանիս գլոխնիս տեղը, կըսէ ամուսինը կընոյ՞ր, որ բարկութենէն կծու դէմք մը շինած, փոխանակ չորս դին նայելու՝ գետնի հողին կը նայեր, մէկ լալը պակաս։

— Ես քեզի կը հասկցունեմ ... մէկ կի-րակի մըն ալ քիւլփիւրնիս փոխենք ի՞նչ կըլ-լայ ... աս քանի դուրս ելլանք նէ Պէյլէր ...

— Հոգիդ կերած տէ կշտացած կէնէ ա-նոթեցած կընիկս, մուգիգայ է նէ մուգիգայ, խախվէ էնէ խախվէ, խալապալըսը հաքէզա, ի՞նչ տեղը կայ քի ալուճով փարայ խարճեմ մէկ երկու սահաթի համար ...

— Կուստո ըսած բանը չունի՞ս քի ... կըսէ տիկինը, կուրծքի ոսկի շղթային հետ խաղալով։

— Ա՛ ... ա՛ ... սուս սախատ լախը-տը մընեք հա՛ ... կուստո չունէի՞ քի քեզի առի ... հէ՛ ...

— Ատ պաշխա ... ես առ ըսել չեմ ու-գեր կոր ...

— Տէ, ատոր շախան չիգայ, Տիւրիկս մտիկ ըրէ աս կռամօֆօնը, ի՞նչ աղուոր կը չալէ կոր, թախըմ չալըր է գիտես քի ...

— Գիտեմ քի մուկը եմ տէ մահերս կը վերցունեն կոր տէրտէրները ... անխըտար գէշ կուգայ կոր ինծի ...

— Չէ՛ ..., ատանկ ճիշէր կոտորուկ լա-ֆեր ընելո՞ւդ պէ՛ս ... կէշ կըլլամ ... աս կազօղդ խըմէ քի բացուիս ...

— Պարէ չօճօիս մըն ալ չեմ ունենար կոր քի անոր հետ իյնամ ելլամ տէ վախիթ ան-ցունեմ ...

— Ատ խօլայ է, դուն ինծի ձգէ առ գործը, ուզածդ չօճօիս ըլլայ ... մնք հիմա էյլէնճէնիս նայինք ...

— Չորս տարի եղաւ, աս հինտիստանէն գարնէ մինչեւ հիմա դպրատուն մը բանալու խըտար եղած էր, ամա ինչ է, կա՞յ մի քեզի իրիկունները խըմել ... տուն ան նայէ, կը-նիկ սիրելը ատանկ չէ ...

Միհրանիկ աղան վրայ կը հասնի, և բա-րու մը տալով կը կենայ մօտերնին։

— Ասծու բարին Միհրանիկ աղա, նասըլ սըն պագալըմ ...

— Չօգ չիւքիւր, պիւր չէյ խիթէ՞րմիսի-նիդ, ըռահաթ մըսընըդ ...

— Պէնճէ էյի ամա, պիղիմքի սուռաթը-նը ասմըլ ...

— Ի՞նչ կախորժիք տիկին, կենցաղավա-րութիւննիդ ինչ իստէկ կառնէ ...

— Ծնորհակալ եմ, դուն անոր խօսքին մի նայիր, իրիկուն եղածին պէս ասանկ լէօ-պէթը կը բռնէ ...

— Գառը գօճա առասընա կիրէմէմ, ը-սելով կը հեռանայ անկէ։

* * *

Յոյն ընտանիք մը, թամամ տասներկու մեծ, վեց հատ պզտիկ, երեք ալ կիրկի չօ-ճուխով կուգան գրաւել բացը մնացած ա-թոռները։

— Քաթիսթէ քալէ Եօուօ, օխ թի օուէա այէռաս բու ֆիսայի, գաթիսթէ, նա Բաւլի, քէսէնա միա քառէղլա ...

Միհրանիկ աղան տեսնելով թէ թաղ մը ամբողջ եկած են պատուել իր պարտէզը, կառսօնին տեղ ինքը անձամբ կերթայ կար-գադերել և հարցնել թէ ինչ կառնեն ...

— Հօշ կէլտինիդ ...

— Օ՛ ... քալօս սաս իվռամէ Միհրա-նաքի ... իսէ գալա՛, կըսէ մէջերնուն քը-

հանթօշ մը, որուն նստուածքէն կերեւէր թէ դրամները ինք պիտի վճարէր ...

— Էֆ. քառիսթօ, թի թա բա՛ռէթէ ...

— Թի՛ աղարաթէ քալէ Գիւնաքիցա՛, էսխ Բավլաքի, օ՛ ալօս ...

Հինգ վայրկեան յունարէն տեսակցեցնէն վերջ, արդիւնքը կը հաղորդեն Միհրանիկ աղային որ է։

— Պիղիմ մատամ թիթիզ տիւ տիստտա հից պիւ սէյ ալմազ, քօքօնա Ծօթինիցա տոնծիսի վառ, Գիւնաքիցա՛ գաւլուն եէմիս քաֆէ ալմամ տիօռ, Բավլի ապա քաֆէ աղզինա քօյմազ, էօպիւիսի տահա ալիսամա տի, պէռիքի բէհիզ տիւ, էքինօս օ Եանգօս տէթէլի թիբօթա, Ի Անկէլիցա, թօռա իրէ սթօսպիթի, զաթէն քիւցիւքլէս պիւ սէյ ալմազ, տէմէք պիզէ կէթիռէծէքսին, իքի սատէ քաֆէ, իքի տէ լօքօմ ...

—

Միհրանիկ աղան վայրկեանապէս աթուռները կը համբէ, որք թիւով տամնը չորս էին, որոնց փոխան երկու դրուշ պիտի ընդունէր, ու մտովի կը մոլտայ,

— Պիզ պահչէ աչտրգ եօգսա հաստահանէ, օ՛ իչմէզ, օպիւրինին սանճըսը վար, էօթէթի գաւլուն եէմիշ, պիլիմ քէսէէ տէ քօլէռա տատանմըշ ըսելով կը մեկնի մօտերնուն։

* * *

Այլ պատկեր։

Անկիւնը ծառին մօտ նստած են երեք օրորդներ, որոնց կառածնէ գլխարկներէ՝ ամուրի են աւելի, վարժուհիներ ըլլալին կը հասկցուի։

— Ինչպէս հոգիս, քիչ մը մեղմացաւ խնդիրը ...

— Մեղմանալը, արծարծիլը իմ ձեռքս է արդէն, ես էի որ մերժեցի զինքը ...

— Նա՛, նա՛, նա՛, եկաւ ... ա՛խ սիրտը կը զարնէ կոր հոգիս ... ա՛խ, գիտեմ որ խմինս է ... կըսէ մին երկու ձեռքերը երեսներուն տանելով։

— Մի նայիք ... որչափ ալ նիհարցեր է ... թող սովորի էշը ուրիշին պատիւին հետ խաղալը ...

Նոյն ատեն Միհրան աղա իրենց կը մօտենայ,

— Ինչ է ան մատմազէլներ հըվըռ հըվըռ

կը խօրաթուիք կոր ... , ինծի նայեցէք հոս դպրոցը չէ, մարդը կը ծեծեն ...

— Օ՛ ... որչափ խիզախ էք ... Միհրանիկ աղա ...

— Խըզախը մըղախը չիտեմ, խելքերնիդ գլորնիդ առէք, վագանցայէն ետքը իրաւ մարդը խըզախը կը զընեն խայտորմիշ կընեն, ըսելով կը հեռանայ ատոնց ալ հաճելի երկու խօսք ըսած ըլլալուն գոհունակութիւնովը։

* * *

Հիմա մութը կոխած է։ Լամբ Լիւսը որ հոտ է դրած, կսկսի լուսաւորել չորս դին, և անոնք, որոնք տունէն չանթա, սէլէ, չըխըն բերած են, կսկսին ճնկելաբանութեան, որոնցմէ մէկ մէկ հատ կուաքիս ճնկող Միհրան աղան ուրախ զուարթ պիւլֆէին կը մօտենայ, մինչ Աշոտ Մասաթեանց մառքաները համբելէ վերջ կ'ըսէ ժպիտ ի շրթունս իր բաղ... ունին. Պին Իթի Եիժ ԲՆՐԲ ԻժՁ ՕԹՈՒՁ ՓԱՐԱ...։

Ահա թէ ինչպէս ուղղամտութեամբ և պարկեշտութեամբ Միհրան էֆէտի իրեն կը քաշէ նախ՝ Սկիւտարի ամբողջ ժողովուրդը, ինչպէս նաեւ, անոնց քսանական փարայէն գոյացած այսչափ դրուշը։

ԼԻԼԱ

Յ. Գ. — Ազնիւ Միհրան էֆէտիս այս ունեւամ յօգուածիս համար ուրիշ բան չեմ խնդրեր քենէ, բայց եթէ ջրախորխորածը խաւմորն մը, որուն մէջ զոյգ մը կեռաս խաղան (այս բանն ալ Աշոտին հարցուր)։

ՆՈՅՆ

ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆԵԱՆ

Սկիւսար Պաղլար-պաւի

.....

ՕՍՄ. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԻՆ ԿՈՂՄԱՆԷ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ Պ. Մ. ՄԱԿԵԱՆԻ



1907 Յուլիս 22, Կիւմի գիւղ ժամ 2 1/2 ին

ՀԱԻԱՏՔ, ՅՈՅՍ, ՍԷՐ

Տրամ 6 արար

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲՈՒՄԵԼԻ-ՀԻՍՍԱՐ. — Հոս սա զրոյցը կը շրջի թէ թաղականի մը տիկինը, էրկանը գլխուն աթոռ մը քաշելով սպառնացիր է որ ետ կենայ այդ պաշտօնէն: (Ըսել է թէ ա- մուսինը Եկեղեցիէն աւելի կը սիրէ եղեր. գովելի տիկին (.) Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Հոս զրոյց կը շրջի թէ թա- ղական մը ժողովին կարծիքը յայտնելէ ա- ռաջ կ'ըսէ եղեր թէ՛ «Անգամ մը մատամիս հարցնեմ... Պաւլօ!»

ՍԿԻՒՏԱՐ. — Սինանեան-Մարեան ֆո- ֆուռին առթիւ կարգ մը հետաքրքրուողներ գիշեր ցորեկ կը համոզեն եղեր Մարեանը որպէսզի՝ քոխով մը հտ կենայ մրցումէն: (Ով որ ճարպիկ խաչամախ եօլի մը ցոյց տայ, լիթա մը պալ պիտա պիտի ստանայ Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Վանքին պաղի տուններէն մի- յին մէջ կատարուած մազի պօեան կը խնդ- րուի որ գէթ՝ վարագոյրին ետին գործադ- րուի, ի սէր քաղաքավարութեան և աւելի՛ ի սէր սիրտխառնուութիւն:

ԵՆԻ-ԳԱՐՈՒ (Տէրիմէն փողոց) Հոս տե- ղի փողոցին մէջ միակ շիւման աղջիկը, ա- մէն գիշեր պախալին քէօշէն կ'երթայ և Սանտրոգ Պուռնուէն ելող երիտասարդները խօլամիշ կ'ընէ: (Օխտը գինճիլի խառախօն- ճօլօզը տեսած ես հրամանքդ. Ծ. Խ.):

ՊԵՅԻՕԶ. — Արհեստով սեւեռնի պա- պուկ հայկարանին կը յանձնարարենք որ, ինքզինքը սուտ խենդ ձեւացնելով վանքին հաւերը չուտէ: (Վերջը ետեւսին ոսկորը կո- կորդը կը մնայ Ծ. Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Մեր կարգ մը բա- ժանորդները կրկին սկսան մշիկ մշիկ քննա- նալ՝ բաժնեգիրները բարձ ընելով, սակայն, անգամ մ'ընդ միշտ կը զեկուցանենք իրենց թէ, ալա լիա գրուածք մը Հանրագիտակի մէջ սոսկում երազէ մը պիտի արթնցնէ պի- րենք: (Հիմա գործ ունիմ, գալ շարթու Ծ. Լ.):

ՆՈՅՆ. — Մեր սրամիտ մրցումին պա- տասխանները մի առ մի քննելու համար ըս- տիպուած ենք յաջորդ թիւով հրատարակել: Ուրիմն չաքաթ մը ևս համբերէն ամեն ա- նոնք որոնք պիտի վայելէն՝ տիպար չաքա- թաթերթին, տիպար Տնօրէնին տիպար կառքը:

ՍԱՌԸՆԱՐ. — Անցեալ շաբթու հոս գի- շերուան մը եազլիս եկող միւսիւ մը, ԵՆԻ- Մահալէի օթէլին մէջ կէս գիշերին 100 թի- ւը բնտուած պահուն՝ որքեւայրի կնոջ մը թեւը ետխալամիշ ընելուն առթիւ՝ պոչին վրայ նայելով ետ դառնաւ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՁԱԿ

Վարժարանիս նպատակն է իր ուսանողներուն տալ քործնական կեանքի պահանջներուն համապատաս- խանող հիմնական և առաջը դաստիարակութիւն մը: Բնիկ և Ամերիկացի ուսուցչական խմբին վրայ աւել- ցած է, Ձուրցերացի ձեռնհաս ուսուցիչ մը՝ մասնաւոր ղյօ տալու համար նաեւ Գրանտերէն լեզուին:

Աշակերտները կը վայելեն բժշկական և ընտանե- կան կատարեալ խնամք վարժարանին մասնաւոր բը- ժիշկին, գիշերօթիկ հինգ ուսուցչներու անմիջական հսկողութեան և Տիկին Զեմպրուսի մայրական խնամք- ներուն տակ:

Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտ- 4 ին (Ն. Տ.) ԴՆ Գիշերօթիկներուն տարեթօշակն է 16 Օամ: Ոսկի, որուն կէսը վճարելի է Սեպտ. ին սկիզբը, իսկ մնացեալը՝ Յունվարի մէջ, Գործիական երաժըշ- տութեան դասին համար կը պահանջուի տարեկան մէկ ու կէս Օամ: Ոսկի:

Թէ՛ հին և թէ՛ նոր աշակերտներ, եթէ կ'ուզեն Հայտար. փաշայէն կէս գնով ճամբորդել, պէտք է գի- մեն Գրիգոր Էֆ. Շահպաղեանի և իրենց անունները արձանագրել տան մինչեւ Օգոստ. 17:

Աւելի տեղեկութեանց համար գիմել Մը. Բիթի կամ Վարժարանի Պոլսոյ գործակատար Գը. Էֆ. Շահպաղեանի, Պայպ. Հաուս, Կ. Պոլիս, և կամ Տնօ- րէնութեան, Պարտիզակ, 10—2

ՀԱՅՈՒՆԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱՐԱՁԱՐ

Հայուհեաց Վարժարանին նպատակն է Հայ աղջիկ- ներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգա- ցած և բարեկրթ տանտիկիններ և դաստիարակու- թեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆի- զիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամիտ հազածութեան առարկայ կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ., Անգլ. Թուրք. և Ֆրանս. լեզուները. ինչպէս նաեւ ընտկան, իմաստո- սիրական, չափական և այլ գիտութիւններ: Մնայուն կարուհի մը կ'ուսանդէ ձեւագիտութեան, կարի և ձեւագործի գտները: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 Օամ: Ոսկի, որուն կէսը պէտք է հատուցանել տա- րեշրջանին սկիզբը, և կէսը ծննդեան արձակուրդին: Դաշնակի և երգեհոնի համար կը պահանջուի 5, 3 և 2 ու կէս Օամ: Ոսկի, դասառութեան թիւին համե- մատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտ. 11 ին (Ն. Տ.) ԴՆ. Իրիկունը:

Աւելի տեղեկութեանց համար խնդրել վարժարա- նին յայտագիրը, կամ գիմել Մը. Բիթի, Պայպ. Հաուս Կ. Պոլիս, կամ գրել Տը. Ս. Էֆ. Կապաֆեանի, Ատե- նապետ Խնամակալութեան, Ատարազար: 10—2

Արսոմսկի ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԿՐ. Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պայպ. Ալի Գաւսէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց


ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ Եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ և գինեւոր անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմով յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղրոններու
և տղայոց շիւք և գիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ միջերք մը պատրաստ ունի,
որ ջերմացէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Օակարկութիւն չկայ, թիւը 2 դըշ է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—45

ԱՌԻԹԷՆ



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղք պէշ, խանին
եակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեդանէ,
Ջինասասանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
պոնէ:

Ամենէն զօրաւոր հաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշագրութիւն մարտային:

ԿՈՒՅԷՔ ՍՏԱՆԱԼ ԶԵՐ ՈՒՉԱՆԵՐ ԳՈՍՏԻՆ ԴԱՐՁՈՎ ՈՒ ԱՆՍԵԱԼ

ՕՐԷՕՐ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ

Գործարար, Նոր Շրջան

ԻՆՉ ԲԱՆԻ ԿՐԵԱՔ ՊԵՏԵՐ ՈՒՆԵՆԱԼ

ԳՊՐՈՑԱԿԱՆ ԼԱԿԱԳՈՅՆ ԴԱՍԱԳՐԲԵՐՈՒՄ՝ ՈՐՈՏՎԱԵՐԱՆՈՒՄ
ԸՆԴԱՆ ՊԱՏ. ՈՒՄՈՒՄ ԽՈՐՀՐԴԷՆ:

ՏՆՈՐԷՆ, ԴԱՍՏԱՎԱԿ, ՕԳՆԱԿԱՆ ՈՒՄՈՒՄԻՆԵՐՈՒՄ՝ ՈՐՈՏՎԱԵՐԱՆՈՒՄ
ՎԿԱՅԵԱԼ, ԿԱՐԿԵՏ ԵՒ ՎՈՐԱՆՈՒՄ:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ԶԵՐԱԳՈՐԾԻ ՈՒ ԳՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐՈՒՄ
ՈՐՈՏՎԱԵՐԱՆՈՒՄ ԵՒ ՏՆԱԿՈՎ ԽԱՎՈՅՆ:

ՏՈՑ ՆՈՒԷՐԻ ՇԱՄԱՐ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԹԵՐՈՒՄ. ԲՈՒՄՔ, ԳՐԻՅ, ՄԵԼԱՆ,
ԿԱՊԱՆԱՐ, ՄԱՍՏՏ, ԲԱՆԱԿ, ՏԵՏՐԱԿ, ԲԱՐԻՅ, ԲԱՐԵՍԱԿԱԿ,
ԿԱԼԻՆ, ԳՃԱԳՐՈՒՅԵԱՆ ԳԱՆԱԳԱՆ ՆԵՐԿԵՆ ԷՆ:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՒՄԻ Ե ԳՈՐԾ՝ Ի ՄԸ. ՎԿԱՅԵԱՆ, ՎԻՏԱԿԱՅՈՅ, ԲԱ-
ՐԵՆԻԵ, ԿԱՏՈՒԱՆԻԵ, ԿԱՅԱՐԱՐ, ԵՂԱՐԵՍԱԿԱՆ, ՈՒՄԱԿԱՅՈՒՄ
ԿԱՆԱՐԱՆ ԷՆ: ԻՆՉ՝ ՈՐ ԱՂ ԸՆԿԱՅՈՒՄ ԵՒ ՆԻԹԵՐՈՒՄ, ԲԱՍԿԵՆ
ԱՆԳԱՄ ՄԻ ՅՈՎԱԶԱՆ ԵՒ ԵՄԿԵԵԱՆ ԳՐԱՍՈՒՄ ԿԱՅԱՆՆԵՐ
ՎՏԱՆ ԸՆԿԱՅՈՒՄ ԵՒ ԽԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԻՍ ԸՆԿԱՅՈՒՄ, ԲԱՆԻ ՈՐ ՄՈՐ ԵՂԱՆԻ
ԱՐՔԻՆ ԱՄԷՆ ԲԵՂԻՄԱԿԱՆՆԵՐ ԿԱՍԱԳՐԵԼԵՆ ՄՈՐ ՈՒ ԲՈՒՄ ԴՐԵՐ
ՄԵԼԱՆԵՆՈՒՄ ԵՒ ԱՐԵՆ՝ ԵՂԱՌ ՏՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՎԵՂ. ԻՆԿԱՅԵԱՆ ՄԱՆ
ՃԵՆԱԳՈՐԾԻ ՄԱՆԿԱՅԱՐՏԵԳԻ ՈՒ ՏՈՑ ՄՈՒՆԵՐԻ ՄԱՆԱՐ ԱՆԱՏ ՆԻՐ:

Հարգուե՛ք՝ ու անմիջապէս պիտի պատահանուի

ապարեղե՛ք՝ ու պիտի ստանա՛ք օրը օրին

ԼԱԿԱԳՈՅՆ ԳԻՆ ԼԱԿԱԳՈՅՆ ԶԵՂՉՈՎ

ԿԱՆԵՆԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆ

ԴԻՄԵՑԷՔ Կ. ՊՈԼԻՍ ԽՈՐԱՎԱՆԵԱՆ ԽԱՆ ՕՂԱՆՆԵՄ ԷՍԿԻՆԱՆ ԳՐԱՏԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Վ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, եայլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ վատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջագգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և դարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի ձօնա. Նովման՝ եայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և լն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանաց տոկունութիւնը, նրբութիւնը և աժաճութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—34



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 զրուշ, գաւառներու համար 108 զրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Զեւքէ վաճառում՝ քաւք փաւա: Հասցէ՝ Ղալաթիա, Քամանտօ փողոց: ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'եղլէ ամէն օր, կէս օրին, խորհաւալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խրմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր տեղի հրապուրիչ դառնայով՝ նորանօր բարեփոխներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի զրպական, բանասիրական չգրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնօթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն: